

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N 1510-Վ

22 10

2008թ.

«ՖԹԻՉԻԱՏՐԻԱ» ՍԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ  
ԲՈՒՀԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի դ/ ենթակետը, 2007 թվականի հոկտեմբերին Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության Եվրոպական տարածաշրջանային գրասենյակի կողմից կազմակերպված «Բոլորն ընդդեմ տուբերկուլոզի» նախարարական համաժողովում ստորագրված Բեռլինյան հռչակագիրը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 28-ի N 52 արձանագրային որոշմամբ հաստատված «2007-2015 թվականների Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի» դրույթները, ինչպես նաև նպատակ ունենալով իրականացնել Հայաստանի Հանրապետությունում բուհական և հետբուհական կրթական համակարգերում «Ֆթիզիատրիա» մասնագիտության գծով ուսումնական գորընթացը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ`

1. Հաստատել՝

- 1) «Ֆթիզիատրիայի ծրագիրը» ընդհանուր բժշկության ֆակուլտետի ուսանողների համար,
- 2) «Ֆթիզիատրիայի մասնագիտացման մեկամյա դասընթացի ծրագիրը» քարձրագույն բժշկական բազայի հիման վրա,
- 3) «Ֆթիզիատրիայի մասնագիտացման եռամսյա դասընթացի ծրագիրը» թերապևտների, ընտանեկան բժիշկների և մանկաբույժների համար:

2. Բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող հաստատություններին՝

- 1) 2008 թվականի նոյեմբերի 1-ից առաջնորդվել սույն հրամանի 1-ին կետով հաստատված կրթական ծրագրերով:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի գիտության, կրթության և անձնակազմի կառավարման վարչության պետ Տ.Սահակյանին:



Հ. ԲՈՒՇԿՅԱՆ

*(Handwritten signature)*

ՆՅԿ. 24.10.08